

## Ի Ր Ա Վ Ա Կ Ա Ն Ձ Ե Կ ՈՒ Յ Յ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆՆԵՐԻ,  
ԵՐԿՍԵՌԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՍԵՌԱԿԱՆՆԵՐԻ  
ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 2009

---

Անգլերեն տարբերակը պատվիրել է ԻԼԳԱ - ԵՎՐՈՊԱՆ  
և կազմված է անկախ փորձագետ Էդմոն Մարուքյանի կողմից  
Հայերեն տարբերակը ֆինանսավորել է Նորվեգիայի Հելսինկյան  
Կոմիտեն և կազմված է անկախ փորձագետ  
Լիգա Գրիգորյանի կողմից

Տպագրվել է Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի աջակցությամբ՝  
Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսավոր-  
մամբ:

## 1. Ներածություն

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապե-  
տությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրա-  
վական պետություն է<sup>1</sup>: Մարդը, նրա արժանապատվությունը, հիմ-  
նական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք-  
ներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնա-  
կան իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ մի-  
ջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապա-  
տասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղա-  
քացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես  
անմիջականորեն գործող իրավունք<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր  
իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները,  
ինչպես նաև վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված  
դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ: Հայաստանի  
Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի  
սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դա-  
տարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրա-  
ռությունը<sup>3</sup>: Սահմանադրական արդարադատությունն իրակա-  
նացվում է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից:

Ադրբեջանի հետ զուգահեռ Հայաստանը անդամակցել է Եվրո-  
պայի Խորհրդին (ԵԽ) 2001 թվականի հունվարի 25-ին: Անդա-  
մակցության ժամանակ Հայաստանը ստանձնել է մի շարք պար-

---

«Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ

P.O. BOX 67, Երևան 0010, ՀՀ

Էլ փոստ: wfce@wfce.am

URL: www.wfce.am

---

1 ՀՀ սահմանադրություն, հոդված 1:

2 ՀՀ սահմանադրություն, հոդված 3:

3 ՀՀ սահմանադրություն, հոդված 92:

տավորություններ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանը, ժողովրդավարական քաղաքական համակարգի կառուցմանը և օրինականության հաստատմանը: Հայաստանը վավերացրել է ԵԽ մարդու իրավունքներին վերաբերող հիմնական փաստաթղթերը: ԵԽ-ի հանդեպ ստանձնած պարտավորություններից մեկը վերաբերում էր սեռական փոքրամասնություններին, մասնավորապես, նախկին քրեական օրենսգրքի 116 հոդվածին, որը ենթադրում էր քրեական պատասխանատվություն «արվամոլության» համար՝ տղամարդու սեռական հարաբերությունը տղամարդու հետ («արվամոլության» բառի հետ հեղինակները համակարծիք չեն այն դիտարկելով որպես խտրական, սակայն պահպանում են բնօրինակի տերմինաբանությունը): Նշված հոդվածն ապաքրեականացվեց նոր քրեական օրենսգրքի ընդունմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին, որն ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին:

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն տեղի ունեցավ 2005 թվականի հունվարի 27-ին, որի արդյունքում փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրության մեջ: Սահմանադրությամբ ամրագրվեց մարդու իրավունքների պաշտպանի ստեղծումը, ընդլայնվեց սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը և սահմանվեց դատական համակարգի անկախության նոր երաշխիքներ:

## 2. Խտրականությունը սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից ու անձնական կամ սոցիալական

բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է<sup>4</sup>: Ինչպես տեսնում ենք՝ նշված հոդվածը հատուկ նշում չի պարունակում այն մասին, որ խտրականությունը սեռական կողմնորոշվածության հիմքով արգելվում է: Միևնույն ժամանակ անձը, ով խտրականության է ենթարկվել նման պայմաններում, կարող է հղում կատարել մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերին<sup>5</sup>, որոնք պարտադիր են դատարանի համար, երբ քննվում է նույնանման փաստական հանգամանքներով գործ<sup>6</sup>:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն<sup>7</sup>: Նույնասեռական անձինք ազատվում են զինվորական ծառայությունից, որը բխում է «Զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածից: Համաձայն նշված հոդվածի՝ քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից և հանվում հաշվառումից առողջական վիճակի պատճառով<sup>8</sup>: Այս հոդվածի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունն ընդունել է ներքին հրաման, ըստ որի նույնասեռական անձինք ազատվում են պարտադիր զինվորական ծառայությունից՝ սեռական կողմնորոշվածությունը դիտարկելով որպես հիվանդություն:

4 ՀՀ Սահմանադրություն, հոդված 41:

5 Ի, Բ-ն ընդդեմ Ֆրանսիայի, ՄԻԵԿ-ի 2008 թվականի հունվարի 22-ի որոշումը:

6 ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 15.4:

7 ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 180.3:

8 Պարտադիր զինվորական ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1:

3. Քրեական օրենսգիրք /

Քրեական դատավարության օրենսգիրք

3.1. Լեսբուհի, գեյ, երկսեռական և փոխսեռական (ԼԳԵՓ) անձանց ձեռքարկությունը և կալանավորումը, իրավական սկզբունքները և պրակտիկան

ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը չեն պարունակում որևէ առանձնահատկություն նույնասեռական անձանց ձեռքարկության և կալանավորման համար:

Նախկին քրեական օրենսգրքի (որն ուժի մեջ էր մտել 1961 թվականին) 116 հոդվածը քրեական պատասխանատվություն էր սահմանում «արվամոլության» համար՝ «տղամարդու սեռական հարաբերությունը տղամարդու հետ պատժվում էր ազատազրկմամբ մինչև հինգ տարի ժամանակով»: Եթե «արվամոլությունը» կատարվել է ֆիզիկական բռնություն, սպառնալիքներ գործադրելով կամ անչափահասի նկատմամբ կամ տուժողի կախյալ վիճակն օգտագործելով՝ պատժվում էր ազատազրկմամբ երեքից մինչև յոթ տարի ժամանակով: Համաձայն ՀՀ դատական մարմինների կողմից տրամադրած տեղեկատվության՝ 1999 թվականից մինչև 2003 թվականն ընկած ժամանակահատվածում 10 անձինք են դատապարտվել նախկին քրեական օրենսգրքի 116 հոդվածով, այդ թվում՝

- ▲ 2 անձ դատապարտվել են ազատազրկման 3 ամիս ժամկետով
- ▲ 2 անձ դատապարտվել են ազատազրկման 1 տարի ժամանակով
- ▲ 1 անձ դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամանակով
- ▲ 2 անձ դատապարտվել են ազատազրկման 3 տարի ժամանակով
- ▲ 1 անձ դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամանակով
- ▲ 1 անձ դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամանակով
- ▲ 1 անձ դատապարտվել է ազատազրկման 6 տարի ժամանակով

Վերը նշված հոդվածն ապաքրեականացվել է նոր քրեական օրենսգրքով, որն ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին: Այնուամենայնիվ, ապաքրեականացումը վերաբերում է նույնասեռականների կամավոր գործողություններին, իսկ բռնի կերպով

կատարված գործողությունները դիտվում են որպես հանցագործություն:

Նշված հանցագործությունը ՀՀ քրեական օրենսգրքում որակվում է որպես «սեռական բնույթի բռնի գործողություններ», համաձայն որի՝ նույնասեռականությունը կամ սեռական բնույթի այլ գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով»<sup>9</sup>:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում նաև անձին սեռական հարաբերության, նույնասեռական կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով, կամ տուժողի նյութական ու այլ կախվածությունն օգտագործելով, որի համար սահմանվել է պատասխանատվություն է սահմանվել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով<sup>10</sup>:

3.2. Դատապարտված նույնասեռական զուգընկերոջը տեսակցելու իրավունքը

Համաձայն քրեակատարողական օրենսգրքի՝ դատապարտված անձանց տեսակցելու երկու տեսակ է սահմանված՝ երկարատև և կարճատև: Կարճատև տեսակցությունը տրամադրվում է մերձավոր ազգականներին կամ այլ անձանց ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ: Մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն՝ համատեղ բնակվելու իրավունքով տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ<sup>11</sup>:

9 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 139.1:

10 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 140:

11 ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92.2:

Համաձայն ընդունված պրակտիկայի՝ մերձավոր հարազատներ են համարվում ծնողները, երեխաները, որդեգրվածները, քույրերը և եղբայրները (ներառյալ մեկ հորից և մեկ մորից ծնվածները) պապ, տատ, թոռներ, ինչպես նաև ամուսինը, կինը և վերջիններիս ծնողները:

Համաձայն քրեակատարողական և ուղղիչ հիմնարկությունների (որոնք գտնվում են ՀՀ Արդարադատության նախարարության ենթակայության տակ) ներքին կանոնակարգի՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին տեսակցություն տրամադրելու անհրաժեշտ պայման են հանդիսանում կալանավորված անձի կամ դատապարտյալի համաձայնությունը և տեսակցություն հայցող անձի դիմումին կցված՝ վերջինիս անձը հաստատող, իսկ երկարատև տեսակցության համար՝ նաև նախկինում համատեղ բնակվելու իրավունքը, ինչպես նաև երեխայի հետ կալանավորված անձի կամ դատապարտյալի արյունակցական կամ ազգակցական կապը հավաստող փաստաթղթերի առկայությունը<sup>12</sup>: Կարճատև տեսակցության առումով ոչ մի խոչընդոտ չկա նույնասեռական անձանց տեսակցության համար: Երկարատև տեսակցության դեպքում տեսակցություն խնդրող անձը պետք է ներկայացնի ապացույց «նախկինում համատեղ բնակվելու իրավունք»-ի վերաբերյալ: Նորմը չի պարունակում կոնկրետ գեղեղերին ուղղված նշում, այլ օգտագործում է «անձ» բառը, սակայն «հակառակ սեռ» ասելով՝ պրակտիկայում նկատի են ունենում ամուսնուն: Այունամենայնիվ, այս նորմը չի բացառում նույն սեռի ներկայացուցիչների կողմից երկարատև տեսակցություն ստանալու իրավունքը, եթե ներկայացվում է ապացույց «նախկինում համատեղ բնակվելու իրավունք»-ի վերաբերյալ: Պրակտիկայում երկարատև տեսակցության հետ կապված մի շարք խնդիրներ կան: Մասնավորապես, մի շարք գործերով տարասեռական զույգերին մերժվել է երկարատև տեսակցություն տրամադրել՝ ամուսնություն

12 ՀՀ կառավարության 3.08.2006 թվականի թիվ 1543-Ն որոշում:

նր քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում չգրանցելու պատճառաբանությամբ<sup>13</sup>: Նշված գործերը ցույց են տալիս, որ եթե ավանդական զույգերը խնդիրներ են ունենում տեսակցության հարցում, ապա նույնասեռական զույգերն ավելի խիստ մոտեցման կարժանանան, քանի որ իրենց պարագայում նրանք ի վիճակի չեն լինի տրամադրել փաստաթուղթ, որը կապացուցի իրենց ամուսնությունը ՀՀ ընտանեկան օրենսգրքի պահանջներին համապատասխան: Ձերբակալվածները, կալանավորվածները, ինչպես նաև դատապարտյալները քրեակատարողական հիմնարկության խցերից կարող են տեղափոխվել իրենց դիմումի համաձայն: Պրակտիկայում, նույնասեռական տղամարդիկ պահվում են մեկ խցում՝ իրենց դիմումի համաձայն:

3.3. Բռնաբարության / սեռական հետապնդման վերաբերյալ օրենսդրություն (նույնասեռականության կամ տարասեռականության վրա հիմնված բռնաբարության/ գեղեղերային յուրահատկությունները հետապնդման դեպքում)

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ բռնաբարությունը տղամարդու սեռական հարաբերությունն է կնոջ հետ՝ վերջինիս կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով<sup>14</sup>: Այս հանցագործության միակ օբյեկտը կնոջ սեռական ազատությունն է և 16 տարեկանից ցածր աղջիկների սեռական անձեռնմխելիությունը: Բռնաբարությունը կնոջ հանդեպ կատարվում է վերջինիս կամքին հակառակ բռնության գործադրմամբ կամ նման բռնության գործադրման սպառնալիքով<sup>15</sup>:

13 ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկությունների, ձերբակալման վայրերի 2005 թվականին անցկացված մոնիտորինգի վերաբերյալ զեկույց, Երևան, 2006:

14 ՀՀ քրեական օրենսգրք, Հոդված 138:

15 ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ, Փաստաբանների միջազգային միություն, 2004:

Բացի «բռնաբարությունից»՝ ՀՀ քրեական օրենսգիրքը տարբերակում է «սեռական բնույթի բռնի գործողություններ»<sup>16</sup> -ը «սեռական բնույթի գործողություններ կատարելուն հարկադրել»<sup>17</sup> -ուց:

Սեռական բնույթի բռնի գործողությունները բնորոշվում են որպես սեռական բնույթի գործողություններ, որոնք կատարվել են տուժողի կանքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

Սեռական բնույթի գործողություններին հարկադրելը ենթադրում է անձին սեռական հարաբերության, նույնասեռականության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական ու այլ կախվածությունն օգտագործելով:

Այս պարագայում նշված երկու հոդվածներում ամրագրված հանցագործությունների օբյեկտը տղամարդու և կնոջ սեռական ազատությունն է: Այս երեք հոդվածներով քրեական պատասխանատվությունն ամրագրված է «արվամոլության», կանանց նույնասեռականության կամ այլ բնույթի գործողությունների համար, որն իրականացվել է տուժողի կամ այլ անձանց նկատմամբ բռնության գործադրմամբ կամ բռնության գործադրման սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

16 ՀՀ քրեական օրենսգիրք, Հոդված 139:

17 ՀՀ քրեական օրենսգիրք, Հոդված 140:

<b>Տարասեռական</b>		
<b>Բռնամարտություն</b>	<b>Տղամարդ տուժող</b>	<b>Կին տուժող</b>
<p><b>Նախկին քրեական օրենսգիրք, հոդված 112/</b></p> <p>Բռնամարտությունը սեռական հարավերություն է ընդունելու, սպառնալիքի գործադրմամբ կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:</p>	<p>Համաձայն գործող ՀՀ քրեական օրենսգրքի՝ միայն կինը կարող է տուժող հանդիսանալ ընդունելու գործով: Չնայած նախկին քրեական օրենսգրքում ուղղակի նշում չկար այն մասին, որ տուժող կարող է լինել միայն կինը, սակայն դա ընդունելու պրակտիկայից:</p>	<p><b>Նախկին քրեական օրենսգիրք</b></p> <p>Պատժվում է ազատազրկմամբ՝ 2-ից 6 տարի ժամանակով, ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ 5-ից 10 տարի ժամանակով:</p> <p><b>Գործող քրեական օրենսգիրք</b></p> <p>Պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 6 տարի ժամանակով, որոշ ծանրացնող հանգամանքների դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ 4-ից 15 տարի ժամանակով:</p>
<p><b>Գործող քրեական օրենսգիրք, հոդված 138/</b></p> <p>Բռնամարտությունը՝ տղամարդու սեռական հարավերությունը կնոջ հետ՝ նրա կանքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ ընդունելու գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով:</p>	<p style="text-align: center;"><b>Նույնասեռական</b></p> <p style="text-align: center;"><b>Տղամարդկանց միջև</b></p> <p>Կիրառելի չէ</p>	<p style="text-align: center;"><b>Կանանց միջև</b></p> <p>Կիրառելի չէ</p>

Սեռական Ունյթի Որոշի գործողություններ	Տղամարդ տուժող/ Տղամարդկանց միջև	Կին տուժող/ Կանանց միջև
---------------------------------------	----------------------------------	-------------------------

**Նախկին քրեական օրենսգիրք, հոդված 112.1/**

Սեռական Ունյթի գործողությունների կատարումը կամ նման գործողությունների կատարելուն հարկադրելի կամ նրա հարազատների նկատմամբ Որոշի ուժի գործադրմամբ կամ անմիջական սպառնալիքի, կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով

**Գործող քրեական օրենսգրքի 139 և 140 հոդվածներ/**

Ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի՝ գործող քրեական օրենսգիրքը տարբերակում է «սեռական Ունյթի Որոշի գործողություններ»-ը «սեռական Ունյթի գործողություններ կատարելուն հարկադրել»-ուց:

Ե՛վ նախկին, և՛ գործող քրեական օրենսգրքերով նախատեսում է պատասխանատվություն:

**Նախկին քրեական օրենսգիրք**

Պատժվում է ազատազրկմամբ՝ 2-ից 6 տարի ժամանակով, սահմանված ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ 5-ից 10 տարի ժամանակով:

**Գործող քրեական օրենսգիրք**

“Սեռական Ունյթի Որոշի գործողություններ”-ի համար

Պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից մինչև 6 տարի ժամանակով, սահմանված ծանրացուցիչ հանգամանքների առկայության դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ 4-ից 15 տարի ժամանակով:

«Սեռական Ունյթի գործողություններ կատարելուն հարկադրել»-ը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ 1-ից 3 տարի ժամանակով:

	Տղամարդ տուժող	Կին տուժող
--	----------------	------------

**«Արվանդության» / կա նանց նույնասեռականություն**

Նախկին քրեական օրենսգիրք, հոդված 116/

Տղամարդու սեռական հարավերությունը տղամարդու հետ պատժվում է:

Գործող քրեական օրենսգրքի 139 և 140 հոդվածներ/

Պատժվում է միայն Որոշի նույնասեռական գործողությունները, ինչը դասվում է «սեռական Ունյթի Որոշի գործողություններ» և «սեռական Ունյթի գործողություններին հարկադրել» հանցագործությունների շարքին (այս հանցագործությունները նկարագրված են վերևում):

Տարասեռական	Տղամարդ տուժող	Կին տուժող
-------------	----------------	------------

Կիրառելի չէ

**Նույնասեռական**

**Տղամարդկանց միջև**

Նախկին քրեական օրենսգիրք

Պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5 տարի ժամանակով, սահմանված ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում պատժվում է 3-ից 7 տարի ժամանակով:

**Գործող քրեական օրենսգիրք**

«Սեռական Ունյթի Որոշի գործողություններ»-ը

պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից մինչև 6 տարի ժամանակով, սահմանված ծանրացուցիչ հանգամանքների առկայության դեպքում պատժվում է ազատազրկմամբ՝ 4-ից 15 տարի ժամանակով:

«Սեռական Ունյթի գործողություններ կատարելուն հարկադրել»-ը

պատժվում է տուգանքով նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ 1-ից 3 տարի ժամանակով:

3.4. Համաձայնության տարիք / անչափահասների հետ սեռական հարաբերությունները (նույն կամ տարբեր սեռերի միջև որևէ տարբերակման առկայությունը)

ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում տասնութ տարին լրացած անձի կողմից փաստացիորեն տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության կամ սեռական բնույթի այլ գործողություններ կատարելու համար<sup>18</sup>: Այս հանցագործության տուժող կարող է լինել և՛ արական, և՛ իգական սեռի անչափահասներ: Գործողությունը բնութագրվում է սեռական հարաբերության ձևով<sup>19</sup> կամ սեռական բնույթի այլ գործողությամբ փաստացիորեն 16 տարին չլրացած անձի նկատմամբ՝ վերջինիս համաձայնությամբ:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում նաև փաստացիորեն 16 տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբար գործողությունների համար<sup>20</sup>: Այս հանցագործության օբյեկտը երկու սեռի անչափահասների բարոյական և ֆիզիկական բնական զարգացումն է: Անառակաբար գործողությունները կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր բնույթի<sup>21</sup>:

#### 4. Անձնական և ընտանեկան կյանք

##### 4.1. Անձնական կյանքի իրավունք

Անձնական կյանքի իրավունքը երաշխավորված է ՀՀ սահմանադրությամբ, որը մասնավորապես սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտան

18 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 141:

19 ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ, Փաստաբանների: Միջազգային միություն, 2004:

20 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 142:

21 ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ, Փաստաբանների միջազգային միություն, 2004:

նեկան կյանքը: Առանց անձի համաձայնության՝ նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ<sup>22</sup>: Նշված իրավունքը պաշտպանվում է նաև ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում անձին վերաբերող տեղեկությունների ապօրինի հավաքման, պահման, օգտագործման կամ տարածման համար<sup>23</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը երաշխավորում է անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը և ամբարձրում է, որ յուրաքանչյուր ոք իր անձնական և ընտանեկան կյանքն անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ոսնձգությունից պաշտպանելու իրավունք ունի: Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն անձի անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ, ինչպես նաև անձնական բնույթի այլ տվյալներ: Անձնական կամ ընտանեկան կյանքի անձնային կողմերին վերաբերող ապացույցները քրեական դատավարությանը մասնակցող այն անձանց պահանջով, որոնց սպառնում է անձնական կամ ընտանեկան գաղտնիքի հրապարակումը, հետազոտվում են դրնփակ դատական միատում<sup>24</sup>:

22 ՀՀ Սահմանադրություն, հոդված 23:

23 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 144:

24 ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 170:

4.2. Նույնասեռ ամուսնություն / գուգրնկեր (օրենքի ամուղղակի դրույթների առկայություն, որոնք հնարավորություն են տալիս պայմանագիր կնքել երկու անձանց միջև համատեղ գույքի վերաբերյալ) / ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ամուսնության վերաբերյալ գենդերային յուրահատկությունները հաշվի առնող դրույթներ

Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք<sup>25</sup>: Այս սահմանադրական նորմից բխում է, որ այն պայմանավորված է գենդերով: Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է տղամարդու և կնոջ ամուսնական դաշինքի կամավորության սկզբունքին համապատասխան: Ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնությունը<sup>26</sup>: Չնայած որ պետությունը ճանաչում է միայն վերը նշված մարմնում գրանցված ամուսնությունը, Հայ առաքելական եկեղեցին (որի հետևորդներն են Հայաստանի բնակչության ավելի քան 85%-ը) նույնպես տրամադրում է ամուսնության վկայականներ այն գույզերին, ովքեր ամուսնանում են եկեղեցու միջոցով: Եկեղեցու կողմից տրամադրված վկայականը չունի իրավական ուժ, սակայն ունի նշանակալի խորհրդանշական իմաստ:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև ամուսնությունները և Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից

25 ՀՀ Սահմանադրություն, հոդված 35:  
26 ՀՀ ընտանեկան օրենսգրք, հոդված 1:

դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում: Օտարերկրյա քաղաքացիների միջև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում<sup>27</sup>: Վերը նշված դրույթը թույլ կտա Հայաստանի Հանրապետությունում ճանաչել նույնասեռ ամուսնությունը այն դեպքերում, եթե դրանք գրանցված են այն երկրներում, որտեղ օրենքը թույլ է տալիս այն, սակայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի մեկ այլ հոդված արգելում է օտարերկրյա ընտանեկան իրավունքի նորմի կիրառումն այն դեպքերում, եթե նման կիրառումը հակասում է Հայաստանի Հանրապետության իրավակարգին (հանրային կարգին): Այդ դեպքում կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը<sup>28</sup>:

### 4.3. Ժառանգական իրավունք

ՀՀ օրենսդրությունը սահմանում է ժառանգության երկու ձև՝ ըստ օրենքի և ըստ կտակի: Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը<sup>29</sup>: Ըստ օրենքի՝ ժառանգության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է ժառանգության իրավունք ունեցող հարազատների ցանկը և ժառանգման կարգը: Ըստ օրենքի՝ ժառանգության դեպքում նույնասեռական գույքը չի կարող ժառանգել մյուսի գույքը, քանի որ օրենքով սահմանված ժառանգների ցուցակը նման հնարավորություն չի ընձեռնում:

27 ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 143:  
28 ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 152:  
29 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1185:

Կտակ է համարվում քաղաքացու մահվան դեպքում նրան պատկանող գույքի տնօրինման վերաբերյալ նրա կամքի արտահայտությունը<sup>30</sup>: Քաղաքացին իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած գույք կտակել ցանկացած անձի, ցանկացած ձևով որոշել ժառանգությունում ժառանգների բաժինները, գրել ժառանգությունից օրինական ժառանգներին, կտակում ներառել ժառանգության մասին սույն օրենսգրքի կանոններով նախատեսված այլ կարգադրություններ, վերացնել, փոփոխել կամ լրացնել կազմված կտակը<sup>31</sup>: Այս պարագայում ակնհայտ է, որ նույնասեռական գույքերը կարող են միմյանց գույք կտակել:

#### 4.4. Որդեգրում

Ամուսնության մեջ չգտնվող անձինք չեն կարող համատեղ որդեգրել միևնույն երեխային<sup>32</sup>: Ինչպես մենք արդեն տեսանք՝ ՀՀ ընտանեկան օրենսդրության տեսակետից ամուսնությունը տղամարդու և կնոջ կամավոր դաշինքն է, հետևաբար, նույնասեռական գույքերը չեն կարող երեխա որդեգրել: Որդեգրումն իրականացվում է դատարանի կողմից որդեգրել ցանկացող անձի կամ անձանց դիմումի համաձայն: Երեխաների որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է խնամակալության և հոգաբարձության մարմնի և որդեգրել ցանկացող անձի պարտադիր մասնակցությամբ: Երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ<sup>33</sup>: Օրենքի տեսակետից՝ նույնասեռական անձի կողմից երեխա որդեգրելու

30 ՀՀ քաղաքացիական օրենսգրք, հոդված 1192 :

31 ՀՀ քաղաքացիական օրենսգրք, հոդված 1193:

32 ՀՀ ընտանեկան օրենսգրք, հոդված 116.2:

33 ՀՀ ընտանեկան օրենսգրք, հոդված 113:

համար որևէ խոչընդոտ չկա, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը հիմնվում է լիազորված մարմնի եզրակացության վրա, ակնհայտ է, որ նույնասեռական անձի դեպքում եզրակացությունը կլինի բացասական: Ընդհանրապես, պրակտիկայում երեխա որդեգրելը բավականին դժվար է նույնիսկ տարասեռական գույքերի և անձանց համար: Այդ պայմաններում դժվար է պատկերացնել նույնասեռական անձին որդեգրողի դերում:

#### 4.5. Բնակարանային իրավունք (նույնասեռական գույքի համատեղ բնակությունը)

Խորհրդային տարիներին գործում էր 1982 թվականին ընդունված Բնակարանային օրենսգրքը, որն ուժը կորցրած է ճանաչվել 2005 թվականին հոկտեմբերի 4-ին Ազգային ժողովի կողմից: Այդ ժամանակից բնակարանային ոլորտը կարգավորող որևէ ակտ չի ընդունվել: Բնակարանային իրավունքի որոշ հարցեր կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Այնուամենայնիվ, այս ոլորտի հիմնական խնդիրները մնում են չկարգավորված՝ ելնելով այն սկզբունքից, որ այն, ինչ արգելված չէ, թույլատրվում է: Այսպիսով, քանի որ նշված ոլորտը կարգավորված չէ օրենքով և նույնասեռական գույքերի միասին բնակվելու վերաբերյալ որևէ օրենսդրական խոչընդոտ չկա, նրանց թույլատրվում է համատեղ բնակություն հաստատել:

#### 5. Ներգաղթ

Օտարերկրացիների իրավական վիճակի մասին ՀՀ օրենքը կարգավորում է ներգաղթի վերաբերող խնդիրներ: Օրենքով կարգավորվում են օտարերկրացիների մուտքի, բնակության, տեղաշարժի, տարանցիկ ուղևորություններ կատարելու, ելքի և Հայաստանում կացության կարգավիճակ ստանալու կարգը<sup>34</sup>:

Օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում օգտվում է միջազգային իրավունքի նորմերով և ՀՀ օրենսդ-

34 Օտարերկրացիների իրավական կարգավիճակի մասին ՀՀ օրենք, հոդված 1:

---

րությանը սահմանված իրավունքներից ու ազատություններից: Օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում պարտավոր է պահպանել Հայաստանի Հանրապետության օրենքները, հարգել նրա ժողովրդի ազգային սովորույթներն ու ավանդույթները<sup>35</sup>: Օրենքը տարածվում է նաև քաղաքացիություն չունեցող անձանց վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Այս օրենքը նույնասեռականների նկատմամբ որևէ սահմանափակում կամ խտրականություն չի պարունակում:

### 5.1. Ապաստան

Փախստականների վերաբերյալ խնդիրները հիմնականում կարգավորվում են Փախստականների մասին ՀՀ օրենքով և ՄԱԿ-ի 1951 թվականին ընդունված փախստականների կարգավիճակի մասին հռչակագրով:

Փախստական է Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձ, որն ըստ ռասայական, ազգային, կրոնական, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների համար հետապնդումների զոհ դառնալու հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիական պատկանելության պետությունից դուրս և չի կարող կամ չի կամենում օգտվել այդ պետության պաշտպանությունից կամ, չունենալով որևէ պետության քաղաքացիություն և գտնվելով իր նախկին հիմնական բնակության վայրի պետությունից դուրս, չի կարող կամ չի կամենում վերադառնալ այդ պետություն կամ եթե անձը միաժամանակ մի քանի պետության քաղաքացի է, սակայն երկյուղ ունի, որ չի կարող օգտվել այդ պետություններից որևէ մեկի պաշտպանությունից<sup>36</sup>: Համաձայն օրենքի՝ ՀՀ մուտք գործած անձը լիազորված մարմնին է ներկայացնում գրավոր դիմում օրենքով սահմանված կարգով փախստականի կարգավիճակ

---

35 Օտարերկրացիների իրավական կարգավիճակի մասին ՀՀ օրենք, հոդված 2:  
36 ՀՀ փախստականների մասին օրենք, հոդված 1:

---

ստանալու համար: Փախստականի կարգավիճակ հայցողին տրվում է փախստականի կարգավիճակ հայցողի վկայական: Յուրաքանչյուր օտարերկրացի իրավունք ունի դիմել փախստականի կարգավիճակ ստանալու համար՝ անկախ տարիքից: Փախստականի կարգավիճակ հայցողը փախստականի կարգավիճակ ստանալու դիմում է ներկայացնում<sup>37</sup>: Փախստականի կարգավիճակ ստանալու մասին դիմումը ենթակա է քննության մեկ ամսյա ժամկետում: Եթե դիմումի քննության համար անհրաժեշտ է լրացուցիչ ժամկետ, ապա դիմումի քննարկումը կարող է երկարացվել մինչև երեք ամիս ժամանակով:

### 5.2. Տեղաշարժվելու ազատություն

Համաձայն ՀՀ սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք<sup>38</sup>:

Տեղաշարժման իրավունքի սահմանափակումը դիտարկվում է նախա և հետ ընտրական ժամանակաշրջանում: Օրինակ, զանգվածային ցույցերի և բողոքի այլ ակցիաների ժամանակ մարզերից մայրաքաղաք տանող ճանապարհները խստորեն վերահսկվում են ոստիկանության կողմից, որը կասկածելի խմբերին և անհատներին ստիպում է հետ վերադառնալ՝ չթողնելով նրանց մուտք գործել մայրաքաղաքի վարչական տարածք: Նման դեպքեր արձանագրվեցին տեղական և միջազգային իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների կողմից:

---

37 ՀՀ փախստականների մասին օրենք, հոդված 12:  
38 ՀՀ սահմանադրություն, հոդված 25:

Օրենսդրական մակարդակով որևէ նորմ չկա, որը խտրական մոտեցման հիմք կհանդիսանար գեյ, լեսբիան, երկսեռական, փոխսեռական անձանց տեղաշարժի ազատության սահմանափակման համար: Պրակտիկայում նման դեպքեր չեն արձանագրվել:

6. Տեղեկատվություն ստանալու իրավունք, արտահայտվելու ազատություն

6.1. ՀՀ սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատություն, տեղեկատվության իրավունք ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից<sup>39</sup>:

2004 թվականից Հայաստանում գործում է տեղեկատվության ազատության մասին օրենքը, որն արդյունավետ ձևով օգտագործվում են իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից: Այս օրենքի համաձայն՝ եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: Եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցում ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը<sup>40</sup>:

Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը չկատարելու համար: Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառա-

39 ՀՀ սահմանադրություն, հոդված 27:

40 Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք, հոդված 9:

վարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելն առաջացնում է պատասխանատվություն տուգանքի ձևով<sup>41</sup>: Տեղեկատվություն տնօրինողը կարող է մերժել տեղեկության տրամադրումը, եթե այն՝

1. պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,

2. խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը,

3. պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները,

4. բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),

5. խախտում է հեղինակային իրավունքը և / կամ հարակից իրավունքները<sup>42</sup>:

Ներկայումս, Հայաստանը խնդիրներ ունի՝ կապված տեղեկատվության էլեկտրոնային միջոցների անկախության հետ: Բոլոր հեռուստատեսային ընկերությունները, որոնք ունեն լայնածավալ ծածկույթ, գտնվում են կառավարող ուժերի ուղղակի ազդեցության տակ, մեկնաբանությունները հիմնականում միակողմանի են՝ գործող վարչակազմի համար դրական ծածկույթ ապահովելու և հակառակը՝ ընդդիմությանը որևէ ծածկույթ չառաջարկելու իմաստով: Ընդդիմության գործողությունները մեկնաբանվում են բացասական լույսի ներքո: Վերջին տարիների ընթացքում Հայաստանում երկու անկախ հեռուստաընկերություններ փակվե-

41 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 1897:

42 Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենք, հոդված 8:

ցին: Տպագիր մամուլը համեմատաբար ազատ է անկախության տեսակետից: Այնուամենայնիվ, տպագիր մամուլը բավականին փոքր է ի գորու լինելու կոտրել միակողմանի մեկնաբանության արգելափակումը: ԼԳԵՓ անձանց նկատմամբ տեղեկատվություն ստանալու կամ տարածելու առումով որևէ օրենսդրական խոչընդոտ չկա:

## 6.2. Արտահայտվելու և կարծիք հայտնելու ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը<sup>43</sup>: Վերջին երեք տարիներին մի շարք լրատվամիջոցների լրագրողների նկատմամբ բռնության դեպքեր են արձանագրվել, որոնք կապված են եղել նրանց մասնագիտական գործունեության հետ, և այդ գործողությունները լայնորեն վտանգում են Հայաստանում արտահայտվելու և կարծիք հայտնելու ազատությունը<sup>44</sup>: Արտահայտվելու ազատության տեսակետից որևէ օրենսդրական խոչընդոտ չկա, որը կարող էր դիտվել ԼԳԵՓ անձանց նկատմամբ խտրականություն:

## 7. Ատելության կոչ / ատելության հանցագործություն

Չնայած ՀՀ քրեական օրենսգիրքը հստակորեն չի սահմանում ատելությունը / ատելության կոչը որպես հանցագործություն, մի շարք հոդվածներում, որոնք վերաբերում են ազգային, ռասայական կամ կրոնական ատելությանը, կրոնական ֆանատիզմին,

43 ՀՀ սահմանադրություն, հոդված 27:

44 ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գեկույցներ, <http://www.ombuds.am>:

ինչպես նաև այլ անձանց ներգրավումը ելնելով վրեժխնդրությունից, համարվում է պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք<sup>45</sup>:

## 8. Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Համաձայն ՀՀ սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը<sup>46</sup>:

Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից: Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը<sup>47</sup>:

Հայաստանում բացի Հայ առաքելական եկեղեցուց, գրանցված են մոտ 80 կրոնական կազմակերպություններ: Մտքի, խղճի, կրոնի ազատության առումով «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության տղամարդ հետևորդներն ունեն խնդիրներ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու առումով: Այլընտրանքային զինվորական ծառայության մասին ՀՀ օրենքը ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին, սակայն «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության հետևորդները շարունակում են խուսափել այլընտրանքային զինվորական և աշխատանքային ծառայությունից:

45 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 63:

46 ՀՀ սահմանադրություն, հոդված 26:

47 ՀՀ սահմանադրություն, հոդված 8.1:

---

ԼԳԵՓ անձանց մտքի, խղճի և կրոնի ազատության որևէ օրենսդրական խորընդոտ չկա:

#### 9. Միավորման կազմելու ազատությունը

Համաձայն ՀՀ սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք<sup>48</sup>:

Հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումները բավարարելու, իրենց և այլոց իրավունքները և շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով<sup>49</sup>: Հասարակական կազմակերպություն գրանցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են ՀՀ Արադարադատության նախարարության պետական ռեգիստր: Համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո պետական գրանցման մարմինը պարտավոր է քննարկել գրանցման դիմումը և 21 օրվա ընթացքում գրանցել կամ մերժել կազմակերպության գրանցումը<sup>50</sup>: ՀԿ-ը կարող է գործել առանց պետական գրանցման, սակայն այդ դեպքում չի կարող ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ վերջինիս իրավունքներով և պարտականություններով: Հայաստանում գրանց-

48 ՀՀ սահմանադրություն, հոդված 28:

49 ՀՀ Ոչ կառավարական կազմակերպությունների մասին օրենք, հոդված 3:

50 ՀՀ Ոչ կառավարական կազմակերպությունների մասին օրենք, հոդված 12.5:

---

ված են շուրջ 4000 հասարակական կազմակերպություններ և պրակտիկայում որևէ խնդիր չկա գրանցման հետ կապված: Միավորումներ կազմելու ազատության առումով օրենսդրական որևէ խոչընդոտ չկա, որը խտրականություն կարող էր դիտվել ԼԳԵՓ-ների հանդեպ:

#### 10. Հավաքների ազատություն

ՀՀ սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք<sup>51</sup>: Չնայած սահմանադրական այս նորմի առկայությանը, մինչև 2004 թվականը Հայաստանում այս ոլորտը կարգավորող նորմեր չեն եղել, այդ պատճառով էլ ցույցերը, երթերը հաճախակի անհիմն կերպով արգելվում էին՝ հղում կատարելով խորհրդային շրջանի հրամաններից:

2008 թվականի ապրիլի 28-ին ընդունվեց ՀՀ օրենքը ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին, համաձայն որի՝ եթե պլանավորված է, որ մասնակիցների թիվը պետք է լինի 100-ից ավելի, ապա կազմակերպիչները պարտավոր են համայնքի ղեկավարին գրավոր կերպով տեղեկացնել զանգվածային միջոցառման անցկացման տեղի մասին: Ծանուցումը համարվում է օրինական, եթե այն ներկայացված է միջոցառումն անցկացնելու նախատեսված օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օր առաջ, և ոչ շուտ, քան քսան օր առաջ: Եթե լիազորված մարմինը չի մերժում զանգվածային միջոցառման անցկացումը մինչև ծանուցման ստացման օրվան հաջորդող ժամը 16-ը, ապա կազմակերպիչները իրավասու են իրականացնել զանգվածային միջոցառումը ծանուցման մեջ նշված պայմաններով: Լիազորված մարմնի կողմից կարող է արգելվել ժողովների, հավաքների, երթերի և ցույցերի անցկացումը, եթե դրանք կատարվում են սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական

51 ՀՀ սահմանադրություն, հոդված 29:

---

ատելություն բորբոքելու, բռնության, պատերազմ քարոզելու նպատակով<sup>52</sup>: Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու առումով որևէ օրենսդրական խոչընդոտ չկա, որը կարող էր խտրական լինել ԼԳԵՓ անձանց նկատմամբ:

11. Առողջության իրավունք / սեռական և վերարտադրողական իրավունքներ

11.1. Բժշկական օգնության իրավունք

Համաձայն ՀՀ սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական սպասարկում ստանալու իրավունք<sup>53</sup>:

Անձի բժշկական օգնություն ստանալու իրավունքն ամրագրված է նաև Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքով: Յուրաքանչյուր ոք անկախ ազգության, ռասասայի, լեզվի, հավատքի, տարիքի, առողջական վիճակի, քաղաքական կամ այլ հայացքների, սոցիալական ծագման, գույքային կամ այլ կարգավիճակի իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում օգտվել բժշկական օգնությունից և սպասարկումից:

Համաձայն ՀՀ սահմանադրության՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք պետության կողմից երաշխավորված առողջապահական ծրագրերի շրջանակում<sup>54</sup>:

Բժշկական օգնություն ստանալու համար դիմելիս և այն ստանալիս անձն իրավունք ունի ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին, ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում, իրազեկ լինել իր հիվանդության մասին և համա-

---

52 Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին ՀՀ օրենք, հոդված 10:

53 ՀՀ սահմանադրություն, հոդված 38:

54 ՀՀ սահմանադրություն, հոդված 38:

---

ձայնություն տալ բժշկական միջամտության համար, հրաժարվել բժշկական միջամտությունից, արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից<sup>55</sup>:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե բուժվող հիվանդի առողջությանն անզուլուրյալ սպառնալով է ծանր կամ միջին ծանրության վնաս<sup>56</sup>:

Իրավական առումով ԼԳԵՓ անձանց առումով բժշկական օգնություն ստանալու իրավունքի վերաբերյալ որևէ սահմանափակում չկա:

11.2. Բժշկական հաստատությունում գաղտնիության պահպանման իրավունքը

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի՝ բժշկական օգնություն ստացողն իրավունք ունի պահանջել բժշկի օգնությանը դիմելու վերաբերյալ փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը առաջացնում է քրեական պատասխանատվություն<sup>57</sup>:

---

55 Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենք, հոդված 2:

56 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 130:

57 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 145:

---

### 11.3. Արհեստական բեղմնավորում: Փոխնակ մայրություն

2002 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց օրենք անձի վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին, որը գործում է 2003 թվականի հուլիսի 7-ից: Համաձայն այդ օրենքի՝ գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինը / կինը միայն փոխադարձ համաձայնությամբ իրավունք ունեն օգտվել մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից: Տղամարդը կամ կինը, ովքեր չեն գտնվում օրենքով սահմանված, պատշաճ կերպով գրանցված ամուսնության մեջ, իրավունք ունեն օգտվել մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից իրենց ցանկությամբ: Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է կիրառել հետևյալ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաները՝ արհեստական սերմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով, արհեստական (արտամարմնական) բեղմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով և սաղմի ներպատվաստում, դոնորական սաղմի ներպատվաստում փոխնակ մոր արգանդում: Համաձայն օրենքի՝ դոնոր լինելու իրավունք ունեն 18-35 տարեկան այն տղամարդիկ և կանայք, ովքեր ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր լինելու բժշկական հակացուցումներ: Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն 18-35 տարեկան այն կանայք, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ: Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (18 տարեկանից սկսած) այն կանայք, ովքեր ցանկանում են կրել հարազատների կողմից տրամադրված սաղմով հղիությունը, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

Այն կանայք, ովքեր ունեն հակացուցում փոխնակ մայր լինելու համար, չեն կարող օգտվել փոխնակ մայր լինելու ծառայությունից:

---

### 11.4. ՄԻԱՎ/ՉԻԱՀ կանխարգելման ազգային ռազմավարությունը

2007 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց ՄԻԱՎ/ՉԻԱՀ ազգային ծրագիրը, որի համաձայն՝ ՄԻԱՎ/ՉԻԱՀ ազգային ծրագրի հիմնական նպատակն է ձևավորել արդյունավետ կանխարգելում<sup>58</sup>:

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում մարդու ինունային անբավարարության վիրուսով վարակելու համար: Համաձայն այդ հոդվածի՝ այլ անձին մարդու ինունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհինսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով<sup>59</sup>:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը իրավունք է տալիս ամուսիններից յուրաքանչյուրին դիմել դատարան ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով, եթե ամուսնացած անձը թաքցրել է իր սեռական հիվանդության փաստը (այդ թվում նաև ինունային անբավարարության վիրուսը) ամուսնության գրանցման պահին:

### 11.5. Արյան դոնորության սահմանափակում

ՀՀ-ում նշված որոշը չի կարգավորվում որևէ իրավական ակտով:

### 12. Գենդերային ինքնություն

12.1. Մեռի փոփոխության վերաբերյալ իրավական դրույթները  
Հայաստանի Հանրապետությունում նշված ոլորտը չի կարգավորվում որևէ իրավական ակտով:

---

58 ՀՀ կառավարության որոշում N 398-Ն, 1 մարտի 2007 թվականը:

59 ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 123:

---

12.2. Սեռի փոփոխության իրավական հետևանքները  
(ամուսնալուծության պայման, անշրջելի  
անպտղաբերություն, բոլոր պաշտոնական  
փաստաթղթերում սեռի փոփոխության  
հնարավորություն՝ ներառյալ ծննդյան վկայականը և այլն)

Հայաստանի Հանրապետությունում նշված ոլորտը չի կարգավորվում որևէ իրավական ակտով: Պաշտոնական փաստաթղթերում սեռի փոփոխությանն առնչվող խնդիրներով անձը կարող է դիմել դատարան և պահանջել դատարանից, որի վճիռն էլ ենթակա է պարտադիր կատարման:

#### Եզրակացություններ և առաջարկություններ

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդին միանալուց հետո արդեն կատարել է նշանակալի քայլ «արվամոլություն» կոչվող հողվածի ապաքրեականացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, դեռ կան ԼԳԵՓ անձանց իրավունքներին առնչվող որոշակի խնդիրներ, որոնց Հայաստանը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի ինչպես օրենսդրական մակարդակով, այնպես էլ առօրյա կյանքում, մասնավորապես՝

- դադարել նույնասեռականությունը դիտել որպես հիվանդություն, որը պատճառ է դառնում խուսափելու գինվորական ծառայությունից,
- օրենսդրության մեջ սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով խտրականության հիմքի ներառում,
- նույնասեռական գույգերի ճանաչում,
- նույնասեռական գույգերին որդեգրման իրավունքի վերապահում,
- սեռի փոփոխման և դրա իրավական հետևանքների վերաբերյալ օրենսդրության մշակում
- նույնասեռական գույգերին ժառանգության իրավունքի վերապահում
- բանտարկված նույնասեռական գույգնկերոջը այցելելու իրավունք:

Պետության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից վերը նշված ուղղություններով հետևողական գործողություններ պետք է ձեռնարկվեն առավելապես ապահովելու այս բարեփոխումների լիարժեք իրականացումը, քան բավարարվել օրենսդրական փոփոխություններով, որոնք ունեն միայն հռչակագրի բնույթ: